

Վերոյիշեալ երեք հաստատումներուն մէջ կը տեսնենք, որ նպատակաբանական բարոյագիտութիւնը չի հետեւիր ինքնին *ճիշդ* կամ *բարի* ուղիի մը, այլեւ կը հետեւի բարոյական արժեքի մը իրականացումին եւ այս անգամ բարոյական *ճիշդ* վարմունքը, ինքը, կախեալ է՝ բարոյագիտական *բարի* շարժառիթէն. այսինքն՝ վերոյիշեալ Ա. եւ Բ. օրինակներու «սպանութիւն»ը եւ «ստախօսութիւն»ը ինքնին *ճիշդ ու բարի* չըլլալով հանդերձ, կ'ընդունուին, որովհետեւ անոնց շարժառիթը *բարի* է եւ մասնաւանդ անոնց հետեւանքները *լաւ ու բարի* են:

Նպատակաբանական կամ հետեւանքային բարոյագիտութեան տեսութիւններուն նաեւ մաս կը կազմեն.-

- Արիստոտէլի բարոյագիտութիւնը⁽⁶⁷⁾ կամ անոր *երջանկապաշտական* (Eudaimonism) հնադարեան տեսութիւնը, ինչպէս նաեւ անոր ժամանակակից հետեւորդները. եւ
- 18-րդ դարուն յառաջացած՝ *օգտապաշտութեան* (Utilitarianism) տեսութիւնը, որու մասին ստորեւ աւելի մանրամասն:



Օգտապաշտութիւն

- Utilitarianism -

Ի՞նչ է **օգտապաշտութիւնը**:

Օգտապաշտութիւնը կազմուած է *օգուտ* (լատ.՝ *utilitas*, անգլ.՝ *Utility*, գերմ.՝ *Nutzen*) եզրէն: Օգուտ մը, որ աւելի բարիքի ու բարօրութեան իմաստը կու տայ. օգուտ մը, որ ինքնին ուրախութիւն, առաւելութիւն կամ շահ կ'ապահովէ: Այստեղ *օգուտը* պէտք է զանազանել օգտակարութենէն (անգլ.՝ *Usefulness*, գերմ.՝ *Nützlichkeit*), որ աւելի կը վերագրուի օրինակ առողջական վիճակի հետ առնչուած ազդակներուն:

Բարոյագիտութեան ոլորտէն դատ, օգտապաշտութիւնը իր իւրայատուկ տեղը ունի նաեւ՝ ընկերաբանութեան, տնտեսագիտութեան եւ այլ ոլորտներէն ներս:

Այս, որպէս փիլիսոփայական տեսութիւն սկսած եւ բարոյագիտական ուղղութիւն դարձած շարժումի գլխաւոր նշանաբանը կարելի է նկատել հետեւեալը.- «գերագոյն երջանկութիւնը, բազմաթիւ մարդոց համար» („the greatest happiness of the greatest number“): Այլ խօսքով, վարմունք մը բարոյական *բարի* ու *ճիշդ* կը նկատուի, երբ առաւելագոյն թիւով մարդոց համար առաւելագոյն երջանկութիւնը պարգեւէ եւ բարի ու օգտաբեր հետեւանքներ ունե-

(67) **Արիստոտէլի բարոյագիտութիւնը** մանրամասնուած է *Առաքինութեան բարոյագիտութիւնը* բաժնին մէջ, տես էջ 196: